

ԻՄ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

ԳԵՂԵՄԻՅ ԴԵՂԷ ԱՂԷՊԱՆԴՐԱՊՈՒՆ:

ԳԵՂԵՄԻՅ. — Գեղիջանը հայաբնակ մի գիւղ է, որ գտնվում է հին Գուգարքի այժմեան Ղաղախու գաւառակի մէջ: Այս գիւղը բնկնում է Սեւանի լճից դէպ ի հիւսիսային արեւմուտք Մթննկամ Կանգարք լեռներից մինի ձորավորի մէջ, որտեղից հասում է Աղստեւ գետը: Գիւղը իւր հիւանալի օգի եւ ջրի պատճառով ամառանոց է գաւառական վարչութեան եւ այլ գիււհատանց պաշտօնեաների եւ ուրիշ հարուստ անձանց՝ որոնք միջոց եւ ցանկութիւն ունին բնութեան վսեմութիւնն ու գեղեցկութիւնը տեսնել ու վայելել:

Գիւղը բաղկացած է բնիկներից՝ որոնք գետափան մօտ խորճիթներում են բնակում ու պարապում են երկրագործութեամբ. եւ նորեկներից՝ որոնք արքունի ճանապարհի երկու կողմը բնակութեան տեղ հաստատելով՝ հոյակապ եւ վայելուչ տներ են շինել եւ բաւական գեղեցիկ ու հարուստ կերպով կահաւորած կրպակներում առ եւ տուր են անում:

Այս գիւղը իւր գրութեամբ գտնուելով Տփլիսու, Երեւանու, Ալեքսանդրապօլու եւ Փանձակի հաղորդակցութեան ճանապարհների վերայ, իւր մէջ բնգունելով զանազան ճանապարհորդների թէ՛ վաճառական, թէ՛ արհեստաւոր եւ այլն, եւ գոյանից օգուտ քաղելով՝ համարեա մի գաւառական քաղաքի տիպ է ներկայացնում: Հայաբնակ գաւառական քաղաքների կամ գիւղաքաղաքների հայ աղգարնակութեան վերաբերութեամբ մի միտք տարական երեւոյթ եթէ կարելի է նկատել, է այն՝ որ վաճառաշահութեան հետ ժողովուրդը եթէ ոչ անհրաժեշտութեան, գոնէ առ ի հարկէ կամ ուրիշներին աչք տալով՝ ունենում է մի փոքր ի շատէ օրինաւոր եկեղեցի եւ մի գպրոց: Գեղիջանը իբրեւ մին այդ գիւղաքաղաքներից՝ ունի մի եկեղեցի, որ իւր ներքին անբարեգարգութեամբ եւ արտաքին անշքութեամբ պատիւ՝ շատ սակաւ է բերում Գեղիջանու հարուստ եւ նորեկ բնակիչներին. իսկ մեծ պատիւ աղքատ եւ գեղջուկ բնիկներին: Գպրոցը իւր ուղիղաց անցեալից յետոյ, գտնվում է այն գրութեան մէջ, որի հետ կարող են մրցել բոլոր գաւառական քաղաքների հայ ծը-

խտական գպրոցները այսինքն, ոչ այնքան լաւ է՝ որ աչքի ընկնի իբրեւ բացառական երեւոյթ, եւ ոչ այնքան վատ՝ որ մարդս ուշագրութիւն չը գարձնի: Գպրոցն եւս իւր ներկայ գրութեամբ պատիւ՝ շատ սակաւ է բերում Գելիջանու հարուստ եւ նորակ բնակիչներին, իսկ մեծ պատիւ՝ գեղջուկ բնիկներին: Ժողովուրդը խօսումէ Ղաղախեցու բարբառով, որ իւր ծանր ու ճապաղ հնչմամբ եւ անհոգ գարձուածներով ու շեշտերով՝ արտայայտումէ Ղաղախեցու մտաւոր զարգացման աստիճանը: Գելիջանու սարերի պառկիւնները զարգարուած են խիտ անտառներով, մանաւանդ հարաւայինը: Գելիջանին գրեթէ կից մի քանի մալականի աներ կան, որ բնաւ նմանութիւն չունեն հայ շինականի խրճիթին: Մալականները պարապում են երկրագործութեամբ եւ սայլապանութեամբ: Գելիջանում նշանաւոր է Էէլճա՛ն կոչուած պարտէզը, իւր ընտանեցրած պտղատու եւ անպտուղ ծառերով, եւ մէջիցը հոսող գետի վերայ շինուած զանազան գործարաններով, որոնք այժմ՝ իւրեանց նախկին նախանձելի գրութիւնը չունին:

* *
*

Մայիսի վերջին օրերում ուղեւորը Գելիջանից գուրս գալով Աղէքսանդրապոլ գնալու համար անցնումէ Գուգարաց աշխարհի մի սքանչելի հովիտով: Ճանապարհի երկու կողմից բարձրանում են միջակ բարձրութիւն ունեցող լեռներ, որոնց լանջքը եւ շատերի կատարները ծածկուած են անտառային բարձրուղէշ, տերեւաշատ եւ բազմաճիւղ ծառերով: Ճանապարհը ձգվումէ արեւելքից գէպ ի արեւմուտք Աղստեւի գետի երկայնութեամբ եւ շատ տեղ հովանաւորուած է ծառերով, որոնց միջից ձախ կողմով շատ տեղ բոլորովին ծածկուած կարկաչելով հոսումէ գետը: Սգը ջինջ ու զուարթ է եղանակը հիանալի, բնութիւնը իւր բազմատեսակ բուսականութեան բարիքներով զարգարել է այս հովիտը, եւ մարդս մի թարմ խոնաւութիւն դգալով՝ աւելի կազդուրուած անյապարար շնչում է եւ իւր աչքը այս ու այն կողմ գարձնում՝ աւելի եւ աւելի տեսնելու աշխարհը եւ նորագեղեցիկութիւնը, որ այնքան հրապուրում են մարդուն, մինչեւ հեռանալ աշխարհային բազմազբաւ բոլոր հաճոյքներից՝ (որոնք ունին թէ իւրեանց քաղցրութիւնը եւ թէ գառնութիւնը)՝ հեռանալ բոլոր բնկերութիւններից՝ (որոնք ունին թէ իւր-

մութիւնն սիրարժան եւ թէ նենգամտութիւնն առելի:) Բայց ոչ, բնութիւնը գեղեցիկ է, վայելել կարելի է, միայն առանձնութիւնը համեմատելով աշխարհային բոլոր հարուածներին՝ այնուամենայնիւ անտանելի է, խիտ անտառը շարունակվում է մինչեւ Փամբակի ձորի առաջի գիւղը, որ կոչվում է ՀԱՄԶԱԶԻՄԱՆ կամ ՓՈՍԻ գիւղ, որ Ալէքսանդրապօլու գաւառի սահմանագլուխն է արեւելեան կողմից: Արեւմտեան լեռնաշղթան, արեգունի սարալանջը չունին այն անտառային ծառերի խտութիւնը, որ ունին հոյս գիմայինները, որոնք արեգակի ուղղակի ճառագայթներին չեն ենթարկվում: Արդեօք այդ հորանից է որ, արեգունի տեղերը արեգակի անմիջական ճառագայթներին ենթարկուելով չեն կարողանում պահպանել հարկաւոր խոնաւութիւնը եւ հիւթը ծառերի եւ բուսականութեան համար, թէ հորանից, որ այդ արեգունի տեղերը իւրեանց յարմարութեամբ աւելի մատչելի են մարդու կործանիչ ձեռքերին:

ՓԱՄԲԱԿԱԶՈՐ:—Համգայիմանի բնակիչքը հայ են, եւ արքունի ճանապարհի վերայ գտնուելով՝ հայի բնական հիւ բաւիրութիւնն ու բարբի ազնուութիւնը սակաւ ինչ կորցնելուց զատ՝ ոչինչ այլ արժանաւորութիւն չեն ստացել եւ ոչ մի բանով չեն կարող գերազանցել իւրեանց հարեւան գիւղերից բայի մի ուսումնարանով, որ մի զգալի օգուտ չտալուց զատ՝ վէժ՝ գլխման եւ քար գոյթակղութեան, կռուածապիկ եւ ատելութեան խնձոր է դարձել հասարակութեան մէջ:

Ինչպէս Ղազախում, հոյնպէս եւ Փամբակաձորում գաղթականներ շատ սակաւ են: Բնիկների խօսուածքը արտասանութեան կողմից նման է Արեւեցւոյ բառերի կազմուածքի եւ քերականական առանձնայատկութիւնների կողմից՝ Աշտարակուոց: Փամբակաձորի բնակիչքը մեծ մասամբ Հայ են, բնակած տեղի լեռնային գիրքի պատճառաւ աւելի խաշնագարման լինելով եւ բարձրաբերձ սարերով համարեա թէ անջատուած մնալով, անխառն եւ անկորուստ պահպանել են իւրեանց նախնական սովորութիւններն ու հաճապետական պարզութիւնը, բացառութեամբ արքունի ճանապարհին մօտ գտնուած գիւղերի եւ այն տեղերի, ուր գտնվում են զինուորների վաշտեր, որոնց պէտքը հոգալու համար գինեւաճառներ, Բէէլ այլ նպարալած սուները զանազան կողմերից հաւաքուած՝

ղգալի կերպով ներգործել են ժողովրդի վերայ: Փամբակեցիք չգիտեն կամայ եւ սահուն կերպով խօսել արագութեամբ: Հայոց լեզուի ընդհանուր յատկութեան հակառակ, մոխանակ բառերը առանց շեշտելու արտասանելու, առաջին վանկի վերայ շեշտումեն: խօսուածքը ընդհատ ընդհատ է եւ դանդաղ, այն ատիճան՝ որ առած է դարձել, այսպէս. պատմումեն որ «մի Աշտարակցի եւ մի Ղազարխեցի (որ գրեթէ Փամբակեցի նոյն է) ընկերացած լինելով՝ ճանապարհին մի տեղ իջեւանում են. հիւրընկալը ճաշին նոցա տալիս է սպաս եւ մի դրրգալ. երկու ընկերները պարմանաւորվումեն որ մինչեւ մինը եօթը գիւղի անուն տալը, ղգալը գործածի եւ այսպէս շարունակաբար. Ղազարխեցին մինչեւ դրգալը ձեռքը առնելը եւ կերակրով մինչեւ բերան տանելը, Աշտարակցին վրայ վրայ տալիս է հետեւեալ գիւղերի անուանքը. Ուշի՝ Ուշական, Կարլի՝ Բիրական, Թալիշ, Թալիս, Մաստարայ՝ քթալի պոչը դէսն արտ», իսկ Ղազարխեցին մինչեւ ամեն մի գիւղին «հէ՛ն նախաբանով եօթն գիւղի անուն տալը ճորելով, Աշտարակցին ամանը մօքրագարդումէ»: Ահա ժողովրդական դատաստանը Ղազարխեցւոց դանդաղկոտութեան մասին: Նոցա միամտութեան չափը գիտենալ ցանկացողը թող կարգայ հանգուցեալ Խաչ Աբալեանի (կարծեմ) «պաշտպանական խաղաղ» գրքոյիը:

Ղազարխեցւոց եւ Փամբակեցւոց բարբառը ունի այնպիսի սճեր ու դարձուածներ, որոնք արժանի են ուշադրութեան, որից մեր սյգժմեան աշխարհաբարը հարստացնելու համար կարելի է մեծ օգուտ քաղել, մանաւանդ խաշնագարմանութեան, ստայնանկութեան եւլն. վերաբերեալ բառերի մասին:

Համզայիմանից սկսած անտառը կորցնումէ այն խտութիւնը, որ կարելի էր նկատել Գեղիջանից մինչեւ այդ տեղ. Փամբակի ձորի սարերի պառիկները տեղ տեղ զրկուելով խիտ անտառային ծառերից, նմանումեն այն մարդուն՝ որ թէեւ շփեղ հագնուած է, բայց այդ շքեղ հագուստը տեղ տեղ պատռտուած լինելով, երեւցնումէ մերկ մարմինը: Անտառը կորցրել է իւր խտութիւնը մանաւանդ արեգակնահայեաց լեռնային լանջքերում: Փամբակի ձորի առողջաբար օդն ու ջուրը, որով ամառ ժամանակ գաւառը Եգեմի է նմանում, կարող էր երջանկացնել իւր բնակիչներին՝ ինչպէս Եգեմը մեր

Նախաճնողներին, բայց ինչպէս պատուիրանագանցութիւնը Ն-գեմի մէջ թունաւորեց մեր նախաճնողներին երջանկութիւնը եւ դառնութիւնն փոխեց՝ այնպէս եւս տգիտութիւնը ու անհագութիւնը թունաւորելէ Փամբակի ձորի բնակիչներին երջանկութիւնը՝ Վասն զի գոքա չեն կարողանում՝ վայելել բնութեան բիւր բարիքը, որոնցով շրջապատուած են, Գոքա գեռ խլուրդի նման գետնափորներումն են բնակում, որ գետնի մակերեւութից ոչինչ բարձրութիւն չունի. նոյն փիճակի մէջ՝ որին ենթարկուած են գոցա անասունները: Գոքա գեռ չեն մտածել իւրեանց դուռը ու երգիլը մտքիւ անասունների աղբից, որ եթէ իւրեանց արտերի վերայ սիւռէին՝ կարող էին մեծապէս շահուիլ:

Գետնափոր փոքրիկ անտէն է միակ բնակարանը բնաճիւրի, որի թիւը կարող է հասնել միջին թուով 10 անձինքների: Տնակի առատապի մեջտեղում՝ փոքրիկ երգիլը ազօտ լոյս եւ օդ է մատակարարում բնակիչներին: Գետնի խոնաւութիւնից յառաջացած բաղմամբիւ միջատները եւ գեռունները անկող հիւրերն են տնակի, որոնցով պարտաւորուած են զբաղուիլ բնակիչները. ոչխարի մորթուց շինած ահագին փռփռէն է նոցա գլխարկը թէ ամառ եւ թէ ձմեռ: Ընդհանրապէս անմաքրութիւնը նկատելի է թէ հագուստի եւ թէ տնային կահ կարասիքի վերաբերութեամբ: Առողջապահութեան կողմից համեմատութիւնը բնիկների եւ նոցա մօտ գտնուած գաղթական մարտիկների մէջ շատ զանազան է: Թէպէտ երկուքն էլ խրճիթի մէջ են բնակում. բայց մալականի խրճիթը գետնի երեսին է շինած, ունի լուսամուտներ, տները շինուած են կարգով-լայն պողոտայի երկայնութեամբ, նեղ ու ծուռ շաւիղներ շատ սակաւ են: Մալականները ձմեռը թեթեւ, տաք գլխարկ են գործ ածում, իսկ ամառը՝ ֆռաթիկ: Ձմեռը տաք մուշտակ ունին, իսկ ամառը՝ արխալուխ: Ամառը մալականները արք եւ կանայք գաշտային գործերով զբաղուելիս՝ շատ թեթեւ են հագնւում. տղամարդիկ հագնում են գունաւոր չիւղ շինած մաքուր շապիկ եւ փերայից կաշէ գօտի կապում, իսկ կանայք՝ նոյնպէս գունաւոր եւ երկար շապիկ շրջադգեստի ձեւով, անբաժան ունենալով գոգնոցը՝ կրճկալը եւ թեւնոցը:

Տեսնելով Հայերի վհատութեալ եւ աննախանձելի կեցութիւնը եւ Մայրականների լուրջ, դուարթ եւ եռանդուն գործունէութիւնը, Հայ մարդը տխուր տրամադրութեան մէջ ընկնելով՝ մտածում է եւ ինքն իրան հարց տաջարկում. ինչի՞ մեր աղքատների մէջ յեանեալ պէտք է լինի. յիսուն տարուան ազատութիւնը դեռ կարող չեղա՞ն Հային իւր ընկած դրութիւնից բարձրացնել: Զարմանալի բնութեան գեղեցկութեան մէջ Հայերը մեծ մտամբ վատառողջ, ստպատող, խեղանգամ եւ այլանդակուած են լինում. ընդհանուր խեղճութիւն նկատելի է: Խօսալսումես գիւղացուն՝ նա սկսում է պատմել իւր անտանիկ կեցութիւնը, աղքատութիւնն ու թշուառութիւնը: Այդ թշուառութիւնից ազատուելու համար, նոքա մի ելք միայն գիտեն — գալթել գէպի Արաբի դաշտերը, որ Աւետեաց Նրկրի մագական հրապոյրով գիւթել է գիւղացուն, եղած արգելքը աւելի սաստկացնում է ցանկութիւնը: Ժողովուրդը իրաւունք ունի գալթականութեան վերայ մտածելու, որովհետեւ Ալէքսանդրապոլս գաւառում՝ ուր կարելի է ընտելուել, ժողովուրդը այնպէս խտացել, բաղմացել է, որ եղած դաշտօրայրը չեն բաւականացնում արօտատեղի եւ ցանք շինելու: Փամբակիձոր եւ Շիրակ լեռնագաշտակ լինելով բաւական երկար ժամանակ ձմեռ են ունենում. այդ երկար ձմեռնը ժողովուրդը գիւղերում պարապ — սարապ նստում է, որովհետեւ դաշտային աշխատանքը դադարում է, իսկ արհեստ չգիտեն, այլ անտեսական պիտոյքի համար մտածել ոչ կարող են եւ ոչ էլ հոգում են: Ի՞նչ են անում գոթա — ո՛չ ինչ. — գեանափոր գոմերում կապում են անասուններին, իրանք էլ Նոյեմբերից սկսած մինչեւ Մարտի վերջերքը կողքներին նստում անգործ. այդ ժամանակի զբաղմունքն է, երիտասարդները՝ օրը երեք անգամ աչք ածել անասուններին՝ առաւօտ ճաշին եւ երեկոյեան է՞ (ուտեստ) տալով եւ ջրելով. մեծերինը, միայն իւրեանց սեւ օրը լաց լինել, բամբասել այս ինչ կամ այն ինչ օքին՝ մտածել Ննգլիզի, Ամսի եւ այլ տէրութեանց վերայ, Յամանցուի ցաւը քաշել, ուտել, խմել, միմնի՝ քնել. լոյսը բացուեց՝ նորից սկսել:

Աանայրը ունին յատկացեալ գործեր. ամեն օր թոնիր վառել, տունը ծխով լցնել, ճփի պփի լացը կտրել, մեծերի որկորը լցնել, կթել, մէրել, խնոցին հարել, կարագը տեղաւորել, եթէ

կարելի է ասել, կար ու կառար էլ անել, ճաշից յետոյ մի քիչ բամբասել, գործ կատարելիս՝ ամբողջ ժամանակ քրթմնջել նեղորակ, գիշերը ամենից ուշ մի քիչ հանգչել, առաւօտը ամենից շուտ վեր կենալ, նորից նոյն կեանքը սկսել: Այս ընդհանուր խոստովանութիւնն է գիւղացու, որ ամենուրեք ինքն խոստովանումէ: Զմեռը իւր անասունների հետ գիւղացին դադարումէ գործելուց, բնութեան հետ նիրհումէ, որ դարունքը բացուելիս իւր անասուններին հաւատար տանջանքով չարչարուի: Այդ երկար պարապորդ ժամանակի, այդ բամբասանքի յառկացեալ եղանակի կամ սեղօնի հետեւանքը այն է լինում, որ գիւղացիք բնութեան հետ արթնանալով, դեռ իւրեանց վար ու ցանքին ձեռք չտուած, դեռ երկրագործական պիտոյից համար կարգաւ որութիւն չարած՝ վազումեն քաղար դատարանները եւ այլ վարչական տները բամբասանքները իրագործելու, քահանային պատժել տալու, քեօխլին փոխելու, տանուտէրին տրտաքսելու եւլն. եւլն. մինչեւ այդ ամենը կատարելը գիւղացու մտքովն անգամ չի անցնում իւր երկրագործութեան վերաբերեալ պարագայից վերայ միանգամ մտիկ տալ. հերկի ժամանակը գալիս է, պատրաստումէ հերկը սկսել, եւ ահա նոր պակասութիւնները երեւումեն նորա աչքին, մինչեւ հոգալը, անցնումէ ժամանակը, իսկ գիւղացին սպասածը չբուսանալով, իւր յանցանքի համար տոտուածային պատիժն է միայն յիշում. եւ իրաւ որ ծուլութիւնից աւելի ինչ մեծ յանցանք կարող է լինել. եւ անօթութունից ու խեղճութիւնից աւելի ինչ մեծ պատիժ կարող է լինել, Աերջապէս գիւղացին վարում, ցանումէ, գալիս տանը նստում որովհետեւ Աստուած գթալով լեռնցւոց վերայ, խոտացել է երկնքի անձրեւով ու յօդով ոռոգել նոցա ցանքը եւ արեգական մեզմ ճառագայթներով աճեցնել նոցա սերմանած ցորենի ու դարու արտերը:— Պատմումեն, վերջինը Պարսիկ խաներից Երեւանայ Հիւսէին խանը հանգիպելով միանգամ Նիրաւում, տեսնելով բնակիչների անհոգութիւնը, եւ պարապ—սարապ մանգալը, հարցնումէ. ինչով էք դուք ապրում, ինչ գործով էք զբաղւում. գիւղացիք պատառխանումեն. վարումներ, ցորեն ու գարի ցանելով՝ տանը նստում ենք մինչեւ հասնելը: Խանը յաւելցնումէ, ցրելու եւ այլ ինամքի հոգս չէք քաշում հապա: Գիւղացիք պատառխանում

են, ոչինչ խնամքի հոգս չըկայ, Աստուած էլ իւր ժամանակին անձրեւով ջրումէ, Խանը այն ժամանակ ասումէ, « Ալլահ ճանա՞ծ՝ Էսպանան, այո ինքն է ես Աստուածն եմ ու չեմ անձրեւում » ինչո՞ւ պէտքէ կերակրուէք, Խանի « Ալլահ ման ամ՝ ես մահում » խօսքը յառակա եղած է ահա 60 տարի է, բայց գիւղացին որ նոյն խօսքը ամեն գէպքում կրկնումէ իւր անհոգութիւնը ցոյց տալու համար, ոչինչ բարոյական խրատ չէ առել յիշեալ առածից։ Դարձեալ նոյն անհոգ, դարձեալ նոյն ծոյր, նոյն տրգէտ, նոյն միամիտ գիւղացին է, եւ եթէ մի փոփոխութիւն կարելի է տեսնել, այդ միայն այն է, որ արեւելցուն յատուկ հիւրասիրութիւնը, ճշմարտախօսութիւնը, հաւատարմութիւնը եւ խօսքի տէր մնալու յատկութիւնները իրեանց նախկին գրութեան մէջ չեն, շատ ու շատ փոխուած են։ Երկար ձմեռները նոքա անգործ նստումեն ու բակրասում, այն ինչ կարող էին իւրեանց ամառնային գործողութեանց համար նախապատրաստութիւններ անել։ Բացի խառատութիւնը, ուրիշ ոչինչ արհեստ չըգիտեն, իսկ խառատութեան մէջ ունեցած բոլոր հանճարը գործ են դնում միայն Աոյ Նահապետի, Եղիսէ մարգարէի 10 լուծ գութանը շինելու, որի քամակից անդատճառ ուրազը պատիկն անցրած պէտքէ մանգայ, որ գութանը բանի, տպաթէ ոչ, յանկարծ խոփը կամ ձեւիչը եւ այլ պարագայքը կապտամարեն եւ քսան հատ անատունները՝ տան մարդը միասին բանախափան կմնան։ Խառատութեան բոլոր հանճարը գործ են դնում միայն երկանիւ հին հայկական սայլերը պատրաստելու, որի անյարմարութիւնն ու անպիտանութիւնը միայն տեսնողներն ու գործադրողները գիտեն։ Մոռացայ յիշել որ բացի խառատներից, (որ հինգ գիւղում $2\frac{1}{2}$ հազիւ կարող է գանուել, եւ գոքա միայն գաշտարանը սկսելիս են ըսկոում իւրեանց արհեստը բանացնել, իսկ ձմեռը հաւատարմութեւ գիւղացւոց բոլորովին պարապ են), կան նաեւ զաւլաբեր (ստփրիչ) այդ գիւղական հասարակութեան լողճաները, որոնք շատ բանուկ գործունէութիւն ունին, վասն զի իւրեանց ածելով ամեն բան են, վերաբուծ, անգամահատ, բժիշկներ, քին եւ արտաքին հոգեկան եւ մարմնական հիւանդութեանց։ Բացի այդ երկու արհեստները, սրտեղ որ քարահանքերը մօտ են՝ այնտեղ գտնվում են քանաշ քարահաններ, իսկ սրմնա-

գիրներ շատ սակաւ՝ այն եւս անհմուտ բոլորովին։ Այն ինչ գիւղացու համար ամենաանհրաժեշտ արհեստներն են դարբնութիւնը, ոստայնանկութիւնը, մաշակարութիւնը եւ այդ արհեստաւորները անկարելի է որ գիւղում մնան թէ գիւղացի էլ լինեն, որովհետեւ քաղաքում սովորելով յիշեալ արհեստները, բնականաւոր Քաղաքի մինչեւ անգամ աննախանձելի կեանքին՝ զիջումն չեն անում իւրեանց գիւղերում մնալ, ուր կարող էին մեծ գիւրութիւն տալ գիւղացոց եւ մեծ օգուտ ստանալ գիւղացիներին։ Ընդհանրապէս փոքր ի շատե գրեւ կարգաւ գիտեցողները, արհեստաւորները եւ կարողութիւն ունեցող անձինքը կենդրոնանում են քաղաքներում, իւրեանց բնագործակազմութիւններին նեղ համարելով գիւղական շրջանը։

Ահա այն ընդհանուր տպաւորութիւնը, որին ենթարկուեցի ես իմ ճանապարհորդութեանս ժամանակ Փամբակի ձորում եւ յետոյ Նիրակի գաղտում ի լրջ լսելով գիւղացի խելացի մարդիկներից եւ աչքով տեսնելով իմ հանդիպած գիւղերում։

Անասնապահութիւնն եւս շատ աննախանձելի դրութեան մէջ է գտնւում, եւ արդիւնքը բնաւ չի ծածկում՝ այն բոլոր ծախքերին՝ որ գործ են զնում գիւղացիք անասուններին դարմանելու համար։ Այս անգամ համառօտելով իմ ընդհանուր տպաւորութիւններս, որիչ անգամ գուցէ առիթ ունենամ խօսել գիւղացիների տնտեսութեան եւ պարապմունքի իւրաքանչիւր ճիւղերի մասին մասնաւորապէս։

(Ծանոթութիւն) .

ՏՈՒՍԻ ՎԱՐԳԱՊԵՏ ՄՈՎՈՒՄԵԱՆ.

ՈՐԻԻՇ ԱՇԽԱՐՀՈՒՄ,

ՏԵՍՈՒԹԻՒՆ Պ. ՏՈՒՆԶԻ.

Մեզ ժԹ. դարու զաւակներին իբր անկարելի է թուում նախնեաց այն հասկացողութիւնը, որոնք կարծում էին, թէ երկրագունդը կազմում է տիեզերքի կենդրոնը, թէ նրա վրայ կանգնած է «բլրեղեայ» կամարը, որի վրայ ամրացրած են «սկեղէն» աստղերը։ Մենք այժմ գիտենք, որ մեր տեսութիւնը ընկզմում է անհուն տարածութեան մէջ, ուր աստղերը, նոյնպիսի մարմինք